ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ք. Արարատ, Շահումյան 34,
Հեռ. (0234)44747, Ֆաքս (0234)44747

N 2015/0047
02 փետրվար 2015թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Աբրահամյան

Կից ներկայացվում է Արարատի քաղաքային համայնքի ավագանու 2015թ. հունվարի 23-ին կայացած հերթական նիստի թիվ 1 արձանագրության թիվ-թիվ 1-3 որոշումները: Առդիր՝ «5» թերթից:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ
ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

Կատ. աշխատակազմի բարտուղար՝ Բաբկեն Բաբայան
(0234)44747, 44250

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<23>> հունվարի 2015 թվականի N 1

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 37 ՇԵՆՔ ԲՆԱԿԱՐԱՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՐԳԻՍ ԶԱՎԵՆԻ ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 –րդ և 32-րդ հոդվածի 12, 13 կետերի պահանջներով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կատարել պետական գրանցում **Շահումյան փողոց 37 շենք բնակարան 5** հասցեի բնակարանի նկատմամբ, որպես Արարատի քաղաքային համայնքի սեփականություն՝ առանձին գույքային միավոր:

2. Ք. Արարատ, **Շահումյան փողոց 37** շենքի բնակարան 5 հասցեն կրող բնակարանը նվիրել այդ բնակարանում բնակվող **Սարգիս Զավենի Մեժլումյանի** ընտանիքին՝ բաղկացած չորս անձից՝ ինքը, քույրը՝ Նունե Զավենի Մեջլումյանը, ծնված 1969թ., քույրը՝ Մանյա Զավենի Մեջլումյանը, ծնված 1971թ. և եղբայրը՝ Տիգրան Զավենի Մեժլումյանը՝ ծնված 1972թ.:

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԵՆՐԻԿ ----------
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ----------
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿ ----------
4. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ ----------
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՆ ----------
6. ՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ ----------
7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻԱ ----------
8. ՕՐԴՈՅԱՆ ՄԱՐՏԻՆ ----------

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ
<<23>> հունվարի 2015 թվականի N 2-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ ,34-րդ հոդվածի 1-ին կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով և ի նկատի ունենալով ,որ համայնքի 2015թ. բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 45258,399 հազ.դրամ՝ նույն թվում՝

-2015թ. համայնքային բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 41028,22 հազ.դրամ.

2015թ. համայնքային բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 4230,179 հ ազ.դրամ.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2015թ. համայնքային բյուջեում կատարված հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1.Համայնքի 2015թ. բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ 45258,399 հազ.դրամը, ավելացնել ֆոնդային մասի եկամուտներին և այն սահմանել 140492,099 հազ.դրամ:Սահմանել համայնքի 2015թ.բյուջեի ընդհանուր եկամուտները 540356,459 հազ.դրամ:

2.Ավելացնել՝

Ծ511.51 ,,Աղբահանություն" ծրագրի

ա/ 5129 ,,Այլ մեքենաներ և սարքավորումներ " հոդվածը 3258,399 հազ.դրամ ,սահմանելով վերջինիս ծախսային պլանը 3258,399 հազ.դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 8492,099 հազ.դրամ:

3. Մնացած՝ 42000,0 հազ.դրամը ձևակերպել համայնքային բյուջեի 1112.52 բյուջեի ֆոնդային մասի <<Պահուստային ֆոնդեր>> ծրագրի 4891 <<Պահուստային ֆոնդեր>> հոդվածում: Սահմանել բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդը 42000,0 հազ. դրամ:

4.Համայնքային բյուջեի 1112.51 ,,Պահուստային ֆոնդեր" ծրագրի վարչական մասի պահուստային ֆոնդից հոդված 4891 600,0 հազ.դրամ ուղղել համայնքային բյուջեի 0861.51 ,,հանգիստ,մշակույթ և կրոն" ծրագրի 4729 ,,Այլ նպաստներ բյուջեից" հոդվածին: Սահմանելով վերջինիս ծախսային պլանը 600,0 հազ.դրամ,իսկ ծրագրի պլանը 3150,0 հազ. դրամ:

Սահմանել համայնքային բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը 1618,4 հազ.դրամ:

5.Քաղաքապետին կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր:

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԵՆՐԻԿ ----------

2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ----------

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿ ----------

4. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ ----------

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՆ ----------

6. ՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ ----------

7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻԱ ----------

8. ՕՐԴՈՅԱՆ ՄԱՐՏԻՆ ----------

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<23>> հունվարի 2015 թվականի N 3

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2014Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի և 46-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու Կանոնակարգով

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը ըստ կազմակերպությունների՝ քաղաքապետարան, ՄՊՄԿ, մարզադպրոց, մշակույթի կենտրոն, արվեստի դպրոց, թիվ 1, թիվ 2, թիվ 3 մանկապարտեզներ, կոմունալ ծառայություն:
/Ցուցակները՝ 21 թերթից, կցվում են: Հավելվածներ 1-9 / :
2.Թույլատրել ենթակա կազմակերպությունների տնօրեններին՝
2.1 Համապատասխան հանձնաժողովների միջոցով դուրս գրել գույքագրման արդյունքում հաշվառված, օգտագործման համար ոչ պիտանի արագամաշ, մանրարժեք գույքը:
2.2 Համապատասխան լիցենզավորված մասնագետների միջոցով ուսումնասիրել գույքագրող հանձնաժողովների կողմից հաշվառված, հետագա օգտագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների բոլոր դետալները, որոշել դրանց օգտագործման պիտանելիության աստիճանը, գնահատել և անհրաժեշտության դեպքում օտարել:
2.3 Փայտանյութից պատրաստված հիմնական միջոցների առանձին մասերը, եթե պիտանի են՝ գնահատել և օտարել, իսկ եթե հնարավոր չէ, շուկայական գներով վաճառել որպես վառելափայտ:

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԵՆՐԻԿ ----------
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ----------
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿ ----------
4. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ ----------
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՆ ----------

6. ՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ ----------

7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻԱ ----------

8. ՕՐԴՈՅԱՆ ՄԱՐՏԻՆ ----------

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ. ՀԱՅԿՅԱՆ